

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն № 2

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2019-2020 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

25 հոկտեմբերի 2019թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 18-ը (ներկայաթերթիկը կցված է):
Նախագահ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ., պրոֆ. Ա. Սադյան
Գիտական քարտուղար՝ ք.գ.թ. Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. ԵՊՀ 100-ամյա հոբելյանի կապակցությամբ Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների պարգևատրում:
2. Բ.00.10 – «Կենսօրգանական քիմիա» մասնագիտությամբ քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Վարդուհի Մանվելի Ղազոյանի «Ֆունկցիոնալ տեղակալված իմիդազոլ-5-ոնների սինթեզն ու հակախոլինէսթերազային ակտիվությունը» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:
Զեկուցող՝ Վարդուհի Ղազոյան
Ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. Վիգեն Թոփուզյան
Գրախոսներ՝ Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի ամբիոնի վարիչ, ք.գ.թ. դոցենտ Հ. Սիմոնյան և նույն ամբիոնի դոցենտ, ք.գ.թ. Ա. Մկրտչյան
3. Ֆարմացիայի ինստիտուտի գիտխորհրդի կազմում ուսանող անդամների փոփոխության հարցը: **Զեկուցող՝** Ա. Դադայան
4. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. ԵՊՀ 100-ամյա հոբելյանի կապակցությամբ Ֆարմացիայի ինստիտուտի աշխատակիցների պարգևատրում:

Լսեցին՝ Գիտական խորհրդի նախագահ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Սադյանին, ով նիստը սկսեց շնորհավորական ուղերձով և ներկաներին հաղորդեց, որ ԵՊՀ 100-ամյա հոբելյանի կապակցությամբ Ֆարմացիայի ինստիտուտի որոշ աշխատակիցներ ներկայացվել էին պարգևատրման: Ա. Սադյանը կրկին ջերմորեն շնորհավորեց բոլորին Մայր բուհի 100-ամյա հոբելյանի կապակցությամբ, մաղթեց բեղմնավոր աշխատանք, նորանոր ձեռքբերումներ և հանձնեց պարգևները:

5. Բ.00.10 – «Կենսօրգանական քիմիա» մասնագիտությամբ քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Վարդուհի Մանվելի Ղազոյանի «Ֆունկցիոնալ տեղակալված իմիդազոլ-5-ոնների սինթեզն ու հակախոլինէսթերազային ակտիվությունը» թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի քննարկում և հաստատում:

Լսեցին՝ Վ. Ղազոյանին, ով մանրամասն ներկայացրեց ատենախոսական աշխատանքը և պատասխանեց հարցերին:

Ելույթ ունեցան՝ գիտխորհրդի նախագահ, ակադեմիկոս Ա. Սադյանը, անդամներ՝ բ.գ.դ. Է. Սեկոյանը, ք.գ.թ. Հ. Սիմոնյանը, ք.գ.թ. Ա. Մկրտչյանը, ք.գ.թ. Կ. Պետրոսյանը, կ.գ.թ. Ա. Հովհաննիսյանը, ովքեր շնորհակալություն հայտնեցին ատենախոսին հետաքրքիր և բովանդակալից զեկուցման համար, ուղղեցին իրենց հարցերը և նշեցին դիտողությունները:

1. Համեմատվել է արդյո՞ք հետազոտված միացությունների հակախոլինէսթերազային ակտիվությունը այլ ստանդարտ ինհիբիտորների հետ:
2. Ինչպե՞ս է գնահատվել հետազոտված միացությունների թունայնությունը, որքա՞ն ժամանակ են իրականացվել այդ աշխատանքները:
3. Ատենախոսական աշխատանքում բացակայում է հապավումների ցանկը, ինչպես նաև սխեմաների համարակալումը:

4. Չնայած նրան, որ էջ 74-ում նշված է, որ N°26 նյութը քիչ թունավոր է, սակայն աշխատանքում բացակայում է նշված նյութի թունավոր հատկությունների ուսումնասիրությունների նկարագրությունը:

Հարցերին պատասխանելու համար ձայնը տրվեց հայցորդին:

Պատասխան՝ Հայցորդ Վարդուհի Ղազոյանը նշեց, որ ատենախոսական աշխատանքի շրջանակներում հետազոտված միացություններից ամենաակտիվի (N° 26) հակախոլինէսթերազային ակտիվությունը համեմատվել է հայտնի ինհիբիտորներ՝ Տակրինի, Դոնեպեզիլի, Գալանտամինի, Ֆենսերինի հետ: Վ. Ղազոյանը նշեց նաև, որ թունաբանական հետազոտությունները տևել են 6-7 ամիս, որի արդյունքում ընտրվել են քիչ թունավորները:

Ելույթի համար Ա. Սաղյանը ձայնը տվեց նաև գրախոս, ք.գ.թ. Հ. Սիմոնյանին, ով ներկայացրեց Ֆարմացիայի ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, պաշտոնական կարծիքի նախագիծը: Հ. Սիմոնյանը նշեց, որ Վարդուհի Մանվելի Ղազոյանի ատենախոսական աշխատանքը վերաբերում է տեղակալված իմիդազոլ-5-ոնների սինթեզին և դրանց արգելակիչ ազդեցության ուսումնասիրմանը խոլինէսթերազ ֆերմենտների նկատմամբ:

Աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ 1,2,4-եռտեղակալված իմիդազոլ-5-ոնների սինթեզի ռեակցիաններում հաստատվել է 1,1,1,3,3,3-հեքսամեթիլդիսիլազանի արդյունավետությունը, որպես սիլիլացնող ազենտի: Ինչպես նաև առաջին անգամ հետազոտվել և հաստատվել է որոշ տեղակալված իմիդազոլ-5-ոնների հակախոլինէսթերազային հատկությունները:

Հետազոտությունների հիման վրա հեղինակը ցույց է տվել, որ.

- սինթեզված 2,4-դիտեղակալված իմիդազոլ-5-ոնների արգելակիչ հատկությունները ացետիլխոլինէսթերազի նկատմամբ ավելի թույլ են, քան բուրբիրիլխոլինէսթերազի նկատմամբ: Իսկ երկու ֆերմենտների նկատմամբ առաջնային ամիդների և սինթեզված միացությունների ակտիվությունների հետազոտությունները ցույց են տալիս, որ ամիդների ցիկլումը բերում է արգելակիչ հատկությունների մեծացմանը,

- սինթեզված 2-ֆենիլ-4-(4-տոլուոլսուլֆոնիլօքսիբենզիլիդեն)իմիդազոլ-5-ոնը համեմատ որոշ հայտնի հակախոլինէսթերազային պրեպարատների (տակրին, դոնեպեզիլ, ռիվաստիգմին, գալանտամին, ֆենսերին) բուժիրիլխոլինէսթերազի նկատմամբ ցուցաբերում է ավելի բարձր արգելակիչ ակտիվություն,
- համապատասխան α, β -դեհիդրոամինաթթուների N-տեղակալված ամիդներից 1,2,4-եռտեղակալված իմիդազոլ-5-ոնների սինթեզի ռեակցիաններում 1,1,1,3,3,3-հեքսամեթիլդիսիլազանը ցուցաբերում է բարձր արդյունավետություն, որպես դեհիդրատացնող ագենտ,
- ըստ դոկինգ-անալիզի արդյունքների, սինթեզված միացությունները առավել լավ կապվում են բուժիրիլխոլինէսթերազի, քան ացեթիլխոլինէսթերազի ակտիվ կենտրոնների պատասխանատու հատվածների հետ: Հետազոտությունների հիման վրա հաստատվել են սինթեզված 2,4-երկ և 1,2,4-եռտեղակալված իմիդազոլ-5-ոնների և α, β - N-տեղակալված դեհիդրոամինաթթուների անիլիդների կոմպլեքսագոյացման օրինաչափությունները:

Գրախոսը հատկապես կարևորեց այն հանգամանքը, որ Վարդուհի Ղազոյանի կողմից մշակվել է նոր մոտեցում 1,2,4-եռտեղակալված իմիդազոլ-5ոնների սինթեզի համար: Իսկ սինթեզված միացությունների հակախոլինէսթերազային ակտիվությունների հետազոտությունների արդյունքները մեծ կիրառական նշանակություն կարող են ունենալ բժշկության և դեղագործության ոլորտում:

Հ. Միմոնյանը նշեց, որ ատենախոսության վերաբերյալ ունի նաև որոշ դիտողություններ.

1. աշխատանքում տվյալներից օգտվելը դժվարեցված է, քանի որ բացակայում է միասնական համարակալումը՝ գրական ակնարկում նյութերի բանաձևերը համարակալված են հռոմեական թվերով, իսկ փորձնական մասում արաբական թվերով,
2. աշխատանքի փորձնական մասում ներկայացված են նաև սինթեզված նյութերի էլեմենտային անալիզի տվյալները, սակայն նշված չէ սարքը և մոդելը, ինչպես նաև նույն բաժնում նշված չեն 18-34 և 39-50 միացությունների քիմիական ելքերը,

3. 126 էջում ֆերմենտի արգելակման տոկոսը արտահայտող երկու հավասարումների ներկայացումը անհասկանալի է, քանի որ երկու հավասարումներն էլ ըստ էության նույնն են, պարզապես մեծությունների նշանակումներն են տարբեր:
4. 64-րդ էջում բերված աղյուսակ 12-ում 140-150 միացությունների համար բացակայում են IC₅₀-երի արժեքները, իսկ 65-րդ էջում ներկայացված աղյուսակ 13-ում բերված չեն մեծությունների չափման միավորները,
5. այն կոնցենտրացիան, որը արգելակում է ֆերմենտին 50%-ով, աշխատանքում նշանակված է IC_{50%}, այնինչ պետք է նշանակվի IC₅₀,
6. աշխատանքը գերծ չէ նաև որոշ տպագրական վրիպակներից, օրինակ՝ ֆերմենտների առաջնային կառուցվածքում ամինաթթվային մնացորդների դիրքը որպես կանոն պետք է գրել ցուցիչում, օրինակ՝ Tyr³⁴¹, էջ 87-ում պարատոլուլսուլֆոթթվի հապավումը գրվել է Tos, սակայն գիտական գրականության մեջ ընդունված է գրել Ts, էջ 40-ում տեքստում նկար 3-ի փոխարեն հղումը տրված է նկար 1-ին:

Ելույթ ունեցողները նշեցին, որ արված դիտողություններն ամենևին չեն նսեմացնում ներկայացված ատենախոսության արժեքը, սեղմագիրը և հրատարակված հոդվածները լիովին արտացոլում են աշխատանքի բովանդակությունը:

Ներկայացված ատենախոսությունն իր ծավալով և բովանդակությամբ լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հայցորդ Վարդուհի Մանվելի Ղազոյանն արժանի է Բ.00.10 – «Կենսօրգանական քիմիա» մասնագիտությամբ քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ելույթ ունեցողներն առաջարկեցին հաստատել Ֆարմացիայի ինստիտուտի կողմից ներկայացված կարծիքը:

Որոշեցին՝ (միաձայն)

1. Հաստատել Վարդուհի Մանվելի Ղազոյանի «Ֆունկցիոնալ տեղակալված իմիդազոլ-5-ոնների սինթեզն ու հակախոլինէսթերազային ակտիվությունը»

թեմայով ատենախոսության վերաբերյալ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի պաշտոնական կարծիքը:

2. Ֆարմացիայի ինստիտուտի գիտխորհրդի կազմում ուսանող անդամների փոփոխության հարցը: Զեկուցող՝ Ա. Դադայան

Լսեցին՝ Գիտական խորհրդի քարտուղար ք.գ.թ. Ա. Դադայանին, ով գիտխորհրդի անդամներին տեղեկացրեց, որ Ֆարմացիայի ինստիտուտի գիտխորհրդի կազմից դուրս են եկել Արտյոմ Համբարձումյանը և Սյուզաննա Ստեփանյանը ուսումն ավարտելու պատճառով և Դավիթ Գասպարի Առաքելյանը, Անահիտ Արմենի Ղազարյանը և Մարգարիտա Հայկի Բաղդասարյանը՝ սեփական դիմումների համաձայն: Նրանց փոխարինելու համար ինստիտուտի ուսանողական խորհուրդը առաջարկում է հետևյալ ուսանողների թեկնածությունները.

1. Մարկոսյան Էմմա Արմենի - 3րդ կուրս
2. Պետրոսյան Լուսինե Սամվելի - 3րդ կուրս
3. Սարգսյան Աննա Արայի - 3րդ կուրս
4. Իսրայելյան Ռուբեն Էդուարդի - 3րդ կուրս
5. Բարսեղյան Աննա Սահակի 2-րդ կուրս

Ա. Դադայանը նշեց, որ ներկայացված ուսանողներն աչքի են ընկնում ուսման բարձր առաջադիմությամբ, ակտիվորեն մասնակցում են ինստիտուտի ուսանողական միջոցառումներին:

Գիտխորհրդին ներկա մյուս անդամները ևս հավանություն տվեցին վերը նշված անձանց թեկնածություններին:

Որոշեցին՝ (*միաձայն*) հավանություն տալ նշված անձանց թեկնածություններին և գիտխորհրդի նոր կազմը հաստատման ներկայացնել ԵՊՀ ռեկտորին:

Գիտական խորհրդի նախագահ՝
տնօրենի պաշտոնակատար,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ք.գ.դ, պրոֆ.

Ա. Սադյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ ք.գ.թ.

Ա. Դադայան